№ 51 Մարտի 23 Շաբաթ

1883

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Մարտի 23 Շաբաթ № 51

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Մեծ-Ղարաբլիսայից։ Նամակ Խմբագրին։ Նեղքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Բանաւորները Եւրոպայում։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Մարտի 17-ին

Անցեալ օր «Մշակի» մէջ տպված նամակը, թէ ինչու հանդուցեալ Նաղարեանցի յիշատակին ստիպղիտներ չեն պահվում ուսումնարաններում, արթնացրեց մեր մէջ հետեւեալ մտածողութիւնը։

Մարդկութիւնը՝ սակաւ բացառութեամբ—ապերախտ է գտնվել միշտ դէպի իր բարերարները՝ սոցա կենդանութեան ժամանակ։ Քանի հանճարաւոր անձինք, աղքատութեան դառն բաժակը քամելով, ժամանակակից սերնդից փոխանակ յարգվելու, հալածված, քանիներ կապանքների մէջ, քանիներ խարոյկի վրա, խաչի վրա վերջացրել են իրանց կեանքը։ Մանաւորելով մեր խօսքը հայերի վերաբերութեամբ, մենք կը տեսնենք որ հայը՝ աւելի ևս ապերախտ է գտնվել դէպի իր աղգակից գործիչները։

Սակայն վերջիններս՝ առանց որ և է ակնկալութեան գործել են յօգուտ աղգի, և իրանց ազատախօսութեան համար ենթարկվել են՝ խաւարասէր, յետադէմ մարդկանց հալածանքին։ Երկաթեայ կամքով և տոկունութեամբ դրա յաղթահարել են այն բազմաթիւ արգելքներին, որոնց բարձրացնում էր նրանց ճանապարհի վրա նախանձոտ, կեղծ աղգասէրների բանակը։ Նախանձոտ հայը չէ սիրում տեսնել մէկին, իր աղգակիցներից որ ո և է ասպարիզում՝, զինուորական, գրականական, բժշկական կամ առևտրական, դուրս գար իր շրջապատողների մէջից։ Հայի աչքը ծակում է իր եղբօր յաջողութիւնը, նա սիրում է կառուցանել իր տունը՝ եղբօր տան փլատակի վրա։ Հայ վաճառականը՝ այն ժամանակն է ուրախ, այն ժամանակն է հրճվում, երբ նրա հակառակորդը—որի հետ մրցել չէ կարող աղնուօրէն—մնաթկացել, վնասվել է։ Արհեստաւորը՝ մի սատանայական ինքնաբաւականութիւն է զգում, իրանից արժանաւոր, բարձր արհեստակցի գեղեցիկ արդիւնագործութիւնը՝ ցեխի հետ հաւասարեցնելով։ Տգէտ հոգևորականը՝ այն ժամանակն է հանգստանում, երբ կրթված, ուսումնական պաշտօնակիցը՝ նորա մատնութեան և ինտրիգների չնորհիւ հալածանքի է ենթարկվում, աքսորվում է։ Հրապարակախօսը՝ այն ժամանակ իրան յաղթող է համարում, երբ իր ստորերկրեայ դարանագործութիւններով ստիպել էր իր հակառակորդին լռելու։ Դիւական ժպիտը խաղում է այդ նախանձով կուրացած մարդկանց շրթունքների վրա, նոքա պարծենում են նորանով որ կարողացել էին առ միշտ լռեցնել մի ճշմարիտ աղգասէր մարդու։ Սակայն՝ չը գիտեն ողորմելիները, թէ դորանով աւելի ևս բարձրացուցել էին հայրենասէր տղամարդի փառքը, իսկ իրանց անարդ ճակատի վրա դրոշմել էին յաւիտենական նախատանաց և անէծքի կնիքը։ Բայց երկարատև չէ դոցա փառքը, դոքա ասուպներ են որ մի վայրկեան լուսավառվելուց յետոյ, անհետ կորչում են տիեզերքի անսահման տարածութեան մէջ։ Եւ եթէ ապագայ սերունդը յիշելու լինի դորանց անունները, կը յիշի ոչ այլապէս, այլ անէծքով։ Այդ խմբից էին այն անձինք որ լռեցրին Նաղարեանցին, Նալբանդեանցին և այլոց։ Համեմատաբար դեռ երէկ վախճանվեցաւ մեր նոր աշխարհարար լեզուի հիմնադիրը, խաւարի դէմ կռուող քաջ ախոյեանը—Սո. Նազարեանցը։ Դեռ երէկ խաւարասէրները նրան ազգամէս, բողոքական, դաւաճան էին անուանում, դեռ երէկ՝ այդ գրականական զառանները զզուելցած հեռացնում էին Կովկասի մայրաքաղաքից ազգի բազմավաստակ մշակին, բայց այսօր նոյն անձինք խոնարհվում են դրա յիշատակի առաջ, որովհետև ազգը ճանաչեց իր ճշմարիտ գործողին, և նրա անունը անջնջելի կերպով արձանագրեց իր բարերարների, անձնազոհ մշակների շարքում։

Բայց ինչ հակասութիւն. «Հիւսիսափայլի» արժանաւոր խմբագրի յիշատակը յարգելու համար ոչ որդեգիրներ են պահվում, ոչ արձան է կառուցվում, իսկ մի լրագրի խմբագրին—որի բոլոր գործը եղել է ազատախօսներին ճնշել, որը աշխատել է ցեխոտել այն բոլոր թերթերին, որոնք թէև տարիքով կրտսեր, սակայն յատկութեամբ և ուղղութեամբ աւագագոյն են գտնվել նորանից—տուել են ոսկեայ գրիչներ, պսակներ, շինել են կիսարձաններ և այլն։ Եւ բացի դորանից մօտ քսան որդեգիրներ պահվելու են այդ խմբագրի անունով։ Եւ դեռ պարծենում էլ ենք թէ ինքնաճանաչութիւնը մեզանում զարգացել է։ Ո՞ւր, ինչ ինքնաճանաչութիւն։ Արժանաւորներին գրեթէ անուշադիր առնել և անարժանների պսակել, նրանց անունով որդեգիրներ պահել՝ դորանումն է միթէ ինքնաճանաչութիւնը։

* * *

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ

—

Մարտի 10-ին

Ճշմարիտ, զանազան իրերի վրա Ղարաքիլիսի թղթակիցները շատ են խօսացել և գրել հայ լրագրութեան մէջ. սակայն մի բան, որ ամենակարևոր և սարսափելի վնասներ արտաղրող խնդիր է, դա ասում ենք, տակաւին մեռեալ հարց լինելով, մեր մէջ գրեթէ կենդանութիւն առած չէ. դա մեր գերեզմանատունը տեղափոխելու անհրաժեշտութիւնն է։ Մեր գերեզմանատունը եկեղեցուն շըրջապատած լինելով, բոլորովին կից է նրան։ Տարիների հոսանքի հետ այդտեղ ամփոփվել են հազարաւոր մարմիններ. այժմ մի որ և է ննջեցեալ պատահած ժամանակ, երբ նրա համար գերեզմանատեղ են փորում, այդ տեղից դուրս են գալիս 2—3 հանգուցեալների փտած ոսկրներ կամ դագաղներ. սրանից հետևում է, որ մեր դամբարանում միմեանց վրա թաղվում են 2—3 ննջեցեալ մարդիկ։ Բացի այն, որ խեղճ հանգուցեալները իրանց կենդանութեան ժամանակ ով գիտէ ինչ տառապանքներ են կրել, մեր, այսպէս ասած, լուսաւորեալ դարում ևս նրանց նեխեալ ոսկրներին հանգստութիւն չենք տալիս, միւս կողմից, պէտք է ի նկատի ունենալ նոյնպէս դրանից առաջացած վնասները, նա մանաւանդ, որ եթէ դրանք վարակիչ հիւանդութիւններից են հանդած լինում։ Դրա վնասները աւելի զգալի կը լինեն ամառ ժամանակ. վասն զի անձրև գալուց յետոյ, երբ արեգակի ազդող ջերմութիւնը տաքացնում է հանգստարանը, այդ տաքութիւնից առաջ եկած գոլորշու հետ՝ բարձրանում է նաև ննջեցեալներից արտաղրված, նեխած գարշահոտութիւնը՝ և տարածվելով դիւղի մէջ՝ ապականում է օդը՝ որով և առիթ լինում զանազան վտանգաւոր հիւանդութեանց. (սրան աւելի օգնում է այն, որ միմեանց վրա մի քանի դիակներ թաղված լինելով, նորի համար հաղիւ փորում են $1^1/_4$ արշ. բացառութիւնները անհնար են). իսկ թէ սրա վրա տեղացիք խորհում—մտածում են, պատասխանը բացասական է։ Այն մտածել և խորհել չէ լինում, որ հրաւիրատներում այս և այն հարցը խօսակցութեան առարկայ էք չինում. այդպիսիները ամեն տեղ և ամեն հրաւիրատան մէջ լինում են. իսկ հետևանքը. ոչինչ։ Այդպիսիների համար առանձին հասարակական ժողովներ են հարկաւոր, որտեղ և գիւղի մեծի—տանուտէրի ներկայութիւնը ամենամեծ դրաւականն է գործի ընթացքը բարեյաջող հետևանքի հասցնելու համար. ուրեմն անհրաժեշտ չէ, որ յիշեալ խնդրին սկզբնապատճառ լինելով, տանուտէրը ուշք դարձնէր սրան։ Կարծում ենք, որ ինչպէս ամեն բանում, նոյնպէս և այստեղ կարող են ամենամեծ դեր խաղալ մեր աղդեցութիւն ունեցող երկու քահանաները. տարակոյս չունենք, որ «Մշակի» սոյն թղթակցութիւնը արձագանք կը գտնի մեր հասարակութեան սրտում։

Ամեն տարի և ամեն ամիս հիւանդութիւնները անպակաս են լինում մեր գիւղից. անտարակոյս այդ հիւանդներից շատերը մեռնում են առանց բժշկի այցելութեան. իսկ եթէ ունենայինք բժիշկ, անկասկած $^1/_3$ մասը կազատվէին բժշկի օգնութեամբ։ Մինչև վերջին երկու երեք թուականները, մեր գիւղացիք բժշկի երես տեսած չէին. սակայն վերջին պատերազմից յետոյ, այստեղի հրապուրիչ օդը և վճիտ ջրերի քաղցրութիւնը ժամանակաւոր կերպով այստեղ տեղափոխել տուեց Ալէքսանդրապօլի զինուորական հիւանդանոցը։ Այո, այդ օրից տեղիս ամենավատ հիւանդներից շատերը ազատվել են նրանց օգնութեամբ և դեռ օգտվելու են՝ քանի որ հիւանդանոցը այստեղ է։ Երկու տարի է մանաւանդ, որ հայրաբար խնամք է տանում տեղւոյս գլխաւոր բժիշկ պ. Տիշեսկին։ Այս շնորհակալութեան արժանի բժիշկը ոչ միայն շատերին այցելում է առանց վիզիտի, այլ և աղքատներին ձրի դեղեր էլ է մատակարարում իր հաշուից։ Ասում են, որ այս պարոնին տեղափոխում են ուրիշ տեղ՝ աւելի մեծ պաշտօնով. ցանկանում ենք սրան ամենայն յաջողութիւն. մի և նոյն ժամանակ, դրա մատուցած ծառայութեան համար, յայտնում ենք մեր հասարակութեան կողմից ամենաջերմ շնորհակալութիւն՝ և խորին ցաւակցութիւն դրա մեզնից բաժանվելու մասին։

Փետրվարի 23-ին մի ներկայացում ունեցանք մեր մատենադարանի օգտին. զուտ արդիւնք առանց ծախսի 65 ր. էր։ Բեմի անյարմարութիւնը շատ է մոլորեցնում մեր խմբին, ուստի և դրանով վատ տպաւորութիւն է թողնվում դերասանների վրա։ Ներկայացումը մանաւանդ աւելի դրական էր։ Ամենամեծ ուշադրութիւնը դարձրեցին՝ Ղարաբիլիսի թղթակիցները։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 8/20 մարտի 1883

Մեզանում կուսակցական կիրքերը նորից վերին աստիճանի լարուել են և ուժգնապէս իրար բաղխելու համար պակասում է ամենափոքր առիթ միայն։ Նախորդ ամսում այդ առիթը պատահեց արդէն, մի փոքր և ահա յայտնվում էր մեծ հրդեհ, եթէ աւժամապէս նրա առաջը չառնուէր մի տկար թումբով որ սակայն իւրաքանչիւր վայրկենում կարող է խորտակուել։ Մեզանում երբէք չի չիջանում կուսակցական մշտավառ հուրը, եթէ կրքերը մերթ լռում են, դա ասել չէ որ կրակը մարել է, ոչ, այլ շատ շատ փոքր ժամանակի համար ծածկուել է միայն մոխրի տակում, նախորդից առաւել սաստիկ կերպիւ արծարծուելու պատրաստ, եթէ միայն նա ստանում է մի թեթև բորբոք։ Ինչ յառաջադիմութիւն կարելի է սպասել այս լարուած վիճակից։

Ընթերցողի մտքում ծագում է մի հետաքրքիր հարց. «արդեօք ինչիցն է յառաջ գալիս այդ վիճակը, ինչ պատճառից ծագում են ձեր կուսակցութիւնները, ինչ նպատակս ընթանում են» հարցնում է նա։ Ես այդ հարցը և ուրիշ քանի մը տեսակ հարցեր մտադիր եմ արդէն լուսաբանել «Մշակի» ներկայ տարուայ էջերում, եթէ միայն ընթերցողը բաւական համբերութիւն կունենայ. իսկ այժմ դառնում եմ իմ անմիջական ասելիքներին։ Երբ ես կը քննեմ ընթերցողի առաջարկած հարցը, յայտնի՛ամ նա անչուշտ այլ ևս չի զարմանայ եթէ կասեմ որ ս. Հայրիկի դէմ էլ յայտնուել է մի հակառակորդ կուսակցութիւն։ «Ուր կուսակցութիւն չը կայ, այն տեղ կեանք էլ չը կայ» ասել է մի քաղաքագէտ։ Ցարակոյս չը կայ որ ընդդիմադիր կուսակցութիւններ միշտ օգտակար են, եթէ նոքա իրանց քննադատութիւններով միայն վարչական կուսակցութեան ցոյց են տալիս ուղիղ ճամբան դէպի նպատակ դիմելու համար. եթէ նրանք միայն, թէև տարբեր միջոցներով, դիմում են դէպի ազնիւ և սուրբ նպատակը. «ամեն ճամբայ ուղիղ է եթէ միայն դէպի Հռոմ կը տանի»։ Բայց մեզանում այդպէս չէ. մեզանում կուսակցութիւնները ոչ միայն դէպի Հռոմ չեն տանում, այլ կաշխատին նաև ուրիշները մոլորեցնել ուղիղ ճամբից։ Այսպէս այն պարոնները՝ որք այսօր հակառակորդ յայտնուել են ս. Հայրիկի դէմ, անչուշտ նրա համար չէ որ՝ ինչպէս իրանք ասում են՝ նախանձախնդրութիւն ունեն ազգային գործերի և տեսնելով գործերը ցաւալի դրութեան միջում հակառակորդ յայտնուել են, ոչ, այլ նրա համար որ իրանք հին կուսակցութիւններից հաշիներ ունեն ս. Հայրիկի հետ, որ իրանք ազգային գործերում չեն և մեծ մասամբ էլ նրա համար, որ այնպէս պատուիրուել է իրանց Վալի-փաշայից, որ անչուշտ շատ կը ցանկանայ մեզանում խռովութիւններ անպակաս տեսնելու և մենք հայ պաշտօնեայներ ունենք, որք իրանց ազգի շահերի հետ չեն ցանկանալ փոխանակել փաշայի մի հրամանը։ Ցաւալի է այս, բայց դուք արդէն գիտէք որ չափազանցութիւն չէ։ Պատուական Բաֆֆին իր անչափ ճարտար գրչաւ իզուր տեղ չէ նկարագրել մի Թոմաս-էֆենդի, որոնցից բաւական շատ կան մեզանում։ Ընդհակառակն այդ պարոններն էին՝ որք ջանացին որ և է կերպով արգելք կանգնել ամեն օգտակար և ազնիւ գործի, ազգային տրոց հաւաքման արգելք լինելու համար ամեն միջոց գործ դրեցին, այնպէս որ ս. Հայրիկ նրանց գործ դրած ցած միջոցներից զզուած քանիցս հրաժարական տուեց, թէև չընդունվեցաւ։ Սակայն այսօր այդ մի և նոյն անձինք բոլոր անամօթութիւնով գանգատում են որ ազգային գործերը լաւ վիճակում չեն, մինչդեռ իրանք իսկ են պատճառ այդ վիճակին. գանգատում են որ դպրոցները վատ դրութեան մէջ են, մինչդեռ իրանք էին որ տակաւին երկու օր առաջ ամեն տեսակ անարդ միջոցներ գործ դրեցին արգելք յարուցանելու համար պ. Փորթուգալեանցի ընդհանուր տեսչութեան պաշտօնին դէմ և իրանց ինտրիգներով յաջողեցան դպրոցները ներկայ անիշխանութեան մատնել, պատճառ դառնալով ուսումնական խորհուրդի և ընդհանուր տեսչի հրաժարման։

Ս. Հայրիկի դէմ երկար ժամանակէ ի վեր գոյութիւն ունէր արդէն մի հակառակորդ խուլ կուսակցութիւն՝ որ բաւական համաձայնութիւն չունէր իր գոյութիւնը երևան բերելու, սակայն նախորդ ամսում պ. Փորթուգալեանցի ընդհանուր տեսչութեան պաշտօնին կոչուելու հարցը առիթ տուեց, որ կուսակցութիւնը իւր բոլոր տգեղ գոյներով երևան եկնէ։ Պատերազմի առաջին յայտարարութիւնը յայտնուեց ուսուցիչների կողմից։

Ձեր ընթերցողներին արդէն յայտնի է, որ նախորդ տարուայ վերջում քաղաքական ժողովը Ուսումն. խորհուրդից ընդունած մի ցանկի միջից Վանի ընդհանուր վարժարանաց տեսչութեան պաշտօնին կոչեց պ. Փորթուգալեանցին, որ յունվար ամսում հաղիւ սարտելով իւր բանակցութիւնները փետրվարի սկզբից անցաւ պաշտօնի գլուխը։ Եթէ միայն ի բաց թողունք չարամիտները, ամեն մարդ գոհ էր այս արժանաւոր ընտրութիւնից, ամեն մարդ կը յուսար պ. Փորթուգալեանցի նման մի ձեռնհաս և արժանաւոր անձ կարող պիտի լինէր դուրս բերել մեր դպրոցները իրանց ներկայ ցաւալի դրութիւնից։ Բայց այդ

ժուարութիւն է պատճառում տոմսակներ բաժանելը. դրանց բաժանողը պէտք է շատ փափուկ անձնաւորութիւն լինի, որպէս զի դրա «խաթեր» համար մարդիկ տոմսակ վերցնեն: Զարչարվում է խումբը, բարոյապէս օգտվում են իրենք, օգտվելու են նոյնպէս իրենց ապագայ սերունդը. սակայն մի տոմսակ առնում են խաթեր համար՝ այն ևս բաժանողին 100 անգամ կարմրացնելուց յետոյ. ահա այսպէս խախուտ է մեր հասարակական գործերի սկզբունքը:

Մ. Տէր-Յարութիւնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Կիևի, 14 մարտի

Ուղարկելով յարգոյ խմբագրութեանդ ութսուն երկու (82) բուբլ (ցուցակով 83 բուբլ 60 կոպ. է, դրանից ծախս է արված 1 բուբ. 60 կոպ.), որ հաւաքված է տեղիս հայ ուսանողներից ու գաղթական և պատահաբար գտնվող հայ վաճառականներից, խոնարհաբար խնդրում ենք ուղարկել այս գումարը Վան, Խրիմեան Հայրիկին իբրև համակրութեան նշան և օգնութիւն նրա սկսած «Կենտրոնական Վարժարանին»: Մեզ մնում է միայն Մոսկվայի հայ ուսանողների հետ միասին դարմանալ Ռուսաստանցի հայերի անտարբերութեան վրա: Մինչդեռ հայրիկի ձայնը արձագանք է գտնում Ռուսաստանի խորքերում գտնվող մի քանի հայերի մէջ, նոյն իսկ բազմաթիւ հարուստ հայերով լցված հայ քաղաքները իրանց ականջները փակել են այդ ձայնին: Մենք կարծում ենք եթէ երբ և իցէ ռուսաստանցի հայը իր փողով դնէ օգնել է իր տաճկաստանցի հայ եղբօր աղքատ ձեռնարկութիւններին, այժմս ևս առաւել պէտք է օգնել նրան: Լրագիրներից երևում է որ տաճկաստանցի հայը ի վերջոյ զգացել է իր անտանելի դրութիւնը, նա մի ջոցներ է որոնում ելնել այդ դրութիւնից, մեր բարոյական պարտականութիւնն է համակրել նրա այդպիսի ցանկութիւններին և օգնութեան ձեռք մեկնել: Մեր մի քանի կօպէկները չը խնայենք նրա բարի նպատակները իրագործելու համար:

Ահա նուիրատուների աղքատունների ցուցակը, որը խոնարհաբար խնդրում ենք տպագրէք «Մշակի» մէջ: Խաչատուրեանց 1 բուբ., Ծառուկեանց 1 բուբ., Զենգերջի 1 բ., Զաքեանց 2 բ., Սիմէօնեանց 2 բ., Զոհրաբեանց 2 բ., Ստեփան Գաբլաճեան (Սեբաստացի) 2 բ., Սարգիս Պոյեաջեանց 2 բ., տիկին Եղիսաբէթ Պոյեաջեանց 1 բ., Գրիգոր Պոյեաջեանց 2 բ., օրիորդ Նազիմզար Պոյեաջեանց 1 բ., Աւետիք Խոռոզեանց 1 բ., Յովհաննէս Խոռոզեանց 3 բ., Գրիգոր Ներսէսեանց 1 բ., Անդրէաս Խոռոզեանց 3 բ., Ամիրաղեան Յարութիւն 1 բ., Համբարձում Ղազարեան 2 բ., Պէլէզրիխեան 50 կոպ., Խաչիկ Մանի 1 բ., Եղիայ Խոռոզեանց 2 բ., Մովսէսեան Մարտիրոս 2 բ., Լաչենեան Յակոբ 1 բ. 50 կ., Դէմիրթաշեանց 60 կոպ., Աջամալեան 60 կ., Յաջի Վարդան Պողոսեան 2 բ., Լուսէղին Զաքեան 1 բ., Սրուանդոյ 1 բ., Յովհաննէսեան Սարգիս 1 բ., Գաբրիելեան Գասպար 3 բ., Դէրեւանլինց Ոսկան 3 բ., Արտեմ Բերլինեան 3 բ., Յովհաննէս Քըրմլեան 1 բ., Փարամազ Մկրտումեան 1 բ., Իսահակ Յակոբեան 1., Թաթէոս Պապով 1 բ., Եպիփան Պապովեան 1 բ., Մելքոն Եարեանց 50 կ., Պետրոս Քիչիճեանց 4 բ., Գրիգոր Արծաթբանեան 2 բ., Յարութիւն Միրզաբէկեան 3 բ., Յարութիւն Ծէրէթէլեանց 2 բ., Պողոս Խոռասանեան 1 բ., տիկին Մարիամ Ներսէսեան 1 բ., Ալէքսանդր Արաչօվիչ 50 կոպ., Աւետիք Զախմախսազեանց 1 բ., Տիգրան Մուխաֆեան 1 բ., Madame Moutaffoff (ֆրանսուհի) 1 բ., Aimé Berthellot (ֆրանսիացի) 50 կոպ., Խաչատուր Պապովիչ 1 բ., Մարտիրոս Յալթունեանց 1 բ., Դէորգ Պանիկեան 2 բ., Գրիգոր Նազարեանց 3 բ., տիկին Թագուհի Պէրպերեան 2 բ., տիկին Դչխուհի Խոռոզեան 1 բ., Միքայէլ Կանանեանց 1 բ.: Այս ստորագրութեան մէջ մասնակցած է Կիևի համարեա ամբողջ հայ հասարակութիւնը:

Կիևի հայ ուսանողներ և վաճառականներ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ մեզ գրում են որ այդտեղի փօստատան մէջ լրագիրներ բաժանելու գործում մեծ անկարգութիւններ են լինում: Ստացողներից մին գանգատվում է թէ նրա «Պսակը» կորաւ, միւսը թէ նրա «Մշակը» ուրիշն է վերցրել և այլն: Այսպիսի գանգատներ և իրաւացի տրտունջներ համարեա ամեն օր են լսվում և լրագիրների շատ համարները կորչում են. «Այս անկարգութեան գլխաւոր պատճառն այն է, ասում է մեր թղթակիցը, որ ով շուտ է հասնում փօստը, լրագիրները նա է ստանում: Փօստում ծառայողները չեն հարցնում եկած մարդը ով է, թէ կուզ նա Վարդանի գիւղից եկած հայերէն ամենեին չիմացող թուրք լինի, դարձեալ առանց որ և է արգելքի նա էլ կարող է հայոց թերթ վերցնել և օգնեցնել: Այսպիսով ամեն մարդ մեզանում կարողանում է լրագիր ստանալ առանց գրված էլ լինելու, իսկ բաժանողը, որ փող էլ է վճարել, նա եթէ փոքր ինչ ուշացաւ փօստատուն, ոչինչ չի ստանայ»:

—

ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են: «Վերջին ժամանակներս անյայտ չարագործներ շատ վայրենաբար են վարվում փողոցների լապտերների հետ. շուտ շուտ կոտրտում են լապտերները, միջի իւղը, իւղամանով ու ապակիով գողանում են: Մարտի 15-ի գիշերն էլ դարձեալ 5 լապտեր միասին էին փշրել: Գլխաւոր ոստիկան պ. Փիրումեանց այս վայրենի չարագործներին գտնելու նպատակով, երբեմն գիշերները գիշերապահների հետ միասին մինչև լոյս շրջում է գիւղի մէջ»:

—

Վերջին ժամանակները կովկասեան վրաց լրագրութիւնը, թէ Թիֆլիսի «Դրօեբա» լրագիրը և թէ մանաւանդ Քութայիսի «Շրօմա» շաբաթաթերթը, սկսել են սաստիկ կերպով յարձակվել հայերի վրա: Վրաց մամուլի մեղադրանքը հայերի դէմ, գլխաւորապէս հիմնվում է այն երևոյթի վրա, որ հայերը իբր թէ հարստահարում են վրացիներին: Բայց, ինչպէս երևում է, վրաց լրագրութեան փորի ցաւն այս չէ, այլ այն, որ վերջին ժամանակները Վրաստանի հայերը սկսեցին նորից յիշել թէ իրանք հայեր են, սկսեցին նորից սովորել իրանց մայրենի լեզուն, սկսեցին նորից հայ դառնալ:

—

Մարտի 21-ին, երեկոյեան, վախճանվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ վրաց յայտնի գեներալ իշխան Գրիգորի Դիմիտրիևիչ Օրբելեանի: Նա կովկասեան զօրքի այժմեան գեներալների մէջ ամենաաւագն էր, մի ժամանակ նշանաւոր դեր էր խաղում կովկասեան վարչական կեանքի մէջ և 1865 թվին կովկասեան փոխարքայի պաշտօնակատարն էր: Նա իր կեանքում մասնակցեց շատ պատերազմներում և յայտնի էր որպէս քաջ զինուոր: Մի և նոյն ժամանակ, իշխան Օրբելեանի յայտնի է վրաց հասարակութեան մէջ որպէս ժողովրդական ընտիր բանաստեղծ: Վրացի գրագէտները վկայում են, որ ոչ ոք վրացիներից այնքան հմուտ չէր վրաց լեզուին, այնքան չէր տիրապետում վրաց գրականական լեզուն, այնքան ծանօթ չէր այդ լեզուի բոլոր նրբութիւններին, որքան հանգուցեալը: Ինչպէս երևում է տեղական լրագիրներում և «Մշակի» մէջ նորերումս տպված տեղեկութիւններից հանգուցեալի հիւանդութեան մասին, որ հաղորդեցին մեզ իշխանի բժշկող բժշկները, հանգուցեալ իշխանի հիւանդութիւնը այնքան վտանգաւոր չէր ինքն իրան, բայց միայն վտանգաւոր էր նրա խոր ծերութեան պատճառով: Պաշտօնական ցուցակին համեմատ հանգուցեալը 83 տարեկան էր, բայց ասում են որ նա իսկապէս 87 տարեկանից անց էր:

—

ՁԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ մեզ գրում են: «Այստեղի ռուս օֆիցերները մտադիր էին անցած յունվար և փետրվար ամիսներում տալ մի քանի թատրոնական ներկայացումներ բարեգործական նպատակով, այն է յօգուտ Լօռու վիճակի հայոց և ռուսաց ուսումնարանների: Բայց զանազան արգելքների հանդիպելով, նրանք հաղիւ կարողացան մի ներկայացումն տալ փետրվարի 28-ին, այն էլ հաղիւ կարողացան ներկայացման ծախսը ծածկել: Նրանք դարձեալ պատրաստվում են իրանց նպատակը իրագործել Զատկի տօներին, տալով միմեանց ետեւից մի քանի ներկայացումներ: Այս բարի գործի ինիցիատօրներն են պ. պ. բժիշկ Պապավակի և պօրուչիկ Պրօսկուրիակով»:

—

Հետեւեալ մի քանի տեղեկութիւններ մեզ հաղորդում են ՍՈՒՐԱՄԻՑ մեր նոր թեմական առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի անցած կեանքից: «Երբ հայր Սեդրակեան վարում էր վանահայրութեան պաշտօն Էջմիածնի Երինջակի վանքում, նա այս վանքում պահում էր մի վանական դպրոց նոյն վանքի ծախսով և ինքն դրաղվում էր ուսուցչութեամբ և մի և նոյն ժամանակ թարգմանեց հետեւեալ գրքերը. նախ «Յափտենական կեանք», յետոյ Հակոբ Հաւզէնի ճանապարհորդութիւնը, և վերջապէս Դրէպերի «Եւրոպայի քաղաքակրթութիւն» գիրքը: Բացի սրանից նա ժողովեց վանեցոց և մուշեցոց երգեր: Սրբազանը շարադրեց նմանապէս Երինջակ վանքի և Նախիջևան գաւառի պատմութիւնը: Նա ունի և զեռ չը հրատարակած գրուածներ: Վանքի վանահայր եղած ժամանակ, երբ բացվեցաւ Սեդրակեան սրբազանի ջանքերով վանական դպրոց, նա հաւաքեց 60-ի չափ մանուկներ և հրավիրեց դպրոցի համար չորս ուսուցիչներ, բերել տուեց Թէոդոսիայից դասական գրքեր: Այս վանքում ուսուցանում էին երեք լեզու. հայոց, ռուսաց և պարսից: Նա երկյարկանի ուսումնարան շինելուց յետոյ, շինեց վանքի արևմտեան պարիսպ մօտ մի գոմանոց և նոյնպէս վերանորոգեց հանգուցեալ Երեմիա վարդապետից շինած երկյարկանի սենեակները: Ահա այսպէս հինգ տարի շարունակ ծառայելով ազգին, սրբազանը անցրեց իր կեանքը վանքում: Ինչպէս մենք վաղուց ճանաչում ենք սրբազանին, նա գործունեայ և անչահասէր անձ է: Յոյս ունենք որ սրբազանը մեծ ուշադրութիւն կը դարձնի մեր թեմական և ծխական ուսումնարանների վրա»:

—

ՅԻՒՆՎԱԼԻ Մարիամեան օրիորդական դպրոցի հոգաբարձու Ալէքսանդր Օհանեանց և խնամակալուհի, Կատարինէ Եարալեանց շնորհակալութիւն են յայտնում ախալքալաքցի պ. Դաւիթ Միրխանեանցին, որ նա յանձն է առել իւրաքանչիւր տարի նուիրել յօգուտ յիշեալ դպրոցի 50 բուբլ գումարը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

—

Ֆրանսիական կառավարութիւնը զբաղված է բնակարանների հարցով: Պատգամաւորների ժողովի մէջ ժիւլ Ֆերրիի արած յայտնութեան համեմատ կառավարութիւնը մտադիր է յանձնել „Credit foncier"-ին, իբրև պատկանող կամ նոր գնած հողերի վրայ տներ կառուցանել առանձնապէս բանուորների ընտանիքների համար: Բնակարանի ամենամեծ վարձը այդպիսի շինութեան մէջ տարեկան 500 ֆրանկից աւելի չը պէտք է լինի: Կառավարութիւնը և Փարիզը տարեկան մէկ միլիոն ֆրանկ օժանդակութիւն կը տան: Լօնդոնի մէջ հրատարակվեցաւ Պիբօդիի նուիրատուութիւնները կարգադրող մասնաժողովի 18-դ հաշիւը, որի նպատակն է էժան բնակարաններ տալ անգլիական բանուորներին: Ամերիկացի Պիբօդի այդ նպատակի համար կտակեց 5 միլիոն բուբլ: 1882 թուականի հաշուի համեմատ այդ գումարը հասել է 9 միլիոն բուբլու: Նուէրեան և հողեր գնելու համար ծախսված է մօտ 10 միլիոն: Մի տարվայ ընթացքում բացված են և վարձով են տրված

մեր ուսուցիչների հաշիւներին ձեռնտու չէր: Ես և իմ յարգելի բարեկամ պ. Դ. Շերենց մեր ուսուցիչներին արդէն քիչ շատ ծանօթացրել ենք ձեզ հետ, նուազ բացառութեամբ բոլորն էլ անձեռնհաս, անծանօթ մինչև իսկ մանկավարժութեան ամենայայտնի պայմաններին: Պ. Փորթուգալեանց անշուշտ չէր կարող պահպանել ներկայ դրութիւնը և ամենից առաջ պիտի ձեռնարկէր անշուշտ մաքրել դպրոցական տաճարը բոլոր տգէտներից և ապիկարներից, բոլոր չարչիներից և ժամակոչներից: Մեր պ. պ. ուսուցիչները իրանց բոլոր տգիտութեամբ հանդերձ կարողանում են գտնել ըմբռնել այս կէտը, որ իրանց շահերին չօչափում էր ուղղակի և աշխատում են վտանգի առաջքն առնել: Թող ընթերցողը իրա բոլոր զօրութիւնը ամփոփէ, նա նորից չէ կարողանում երևակայել աւելի անարդ սկանդալներ, աւելի ցած խնտրիգներ՝ քան այն զոր սարքում և գործ դնում են մեր պ. պ. ուսուցիչները: Ամենից առաջ նրանք մի դրութիւն ներկայացնում են ուսումն. խորհուրդին, նկատելով որ վտանգաւոր է ընդհ. տեսչութեան պաշտօնը յանձնել մի անկրօն մարդու որպիսին պ. Փորթուգալեանցն է: Ցեղնալով որ իրանց նկատողութեան ուշք չեն դարձնում, նրանք դիմում են ամբոխի ֆանատիկոսութեան: Օժանդակ ունենալով իրանց պաշտօնակից քահանաներին նրանք իբրև անկրօն հռչակում են թէ ուսումն. խորհուրդին և թէ ընդհ. տեսչին: Ձեր հակառակորդ խաւարասէր մամուլն էլ այլապէս չէ վարվում: Ինչ արած, հացի խնդիր է: Թաղական խորհուրդներից ոմանք էլ՝ որոնք այսպիսի առիթ մը սպասում էին ս. Հայրիկի հետ իրանց հաշիւները մաքրելու համար և ուրիշներ էլ որք գտանվում են մեծաւ մասամբ ուսուցիչների և քահանաների ազդեցութեան ներքոյ, մերժում են վճարել ընդհ. տեսչութեան ծախքերին համար Քաղաքական ժողովից որոշուած գումարը:

Մեւս կողմից Նորաշէնի դպրոցի տեսուչ և դասատու քահանայ Գինէչեանց անամօթութիւնը այն աստիճանի է հասցնում, որ համարձակվում է մինչև անգամ ըմբոստել Ուսումն. խորհուրդի դէմ, նա չէ ճանաչում ոչ Ուսումն. խորհուրդին երբ նա նախորդ ամսի 5-ին այցելում է նրա դպրոցը և ոչ էլ ընդհ. տեսչին՝ երբ ուսումն. խորհուրդը կամենում է ի պաշտօնէ ներկայացնել նրան դպրոցի պաշտօնեայներին. թէև ինքը տէր-հայրն էլ անգամ էր ուսումն. խորհուրդին՝ որից արտաքսվեց և ընդհ. տեսչութեան պաշտօնը հատատել ցանկացողներին համամիտ, երբ կը յուսար որ ինքը կընտրուի այդ պաշտօնին: Մեզանում արժանիքը այսչափ ստոր աստիճանի վրայ է անա և ուսումն. խորհուրդը Գինէչեանցի ըմբոստութիւնից և սարքած անպատիւ սկանդալներից զայրացած, Քաղ. ժողովի միջոցաւ պաշտօնանկ անում է նրան, բայց չէ յաջողվում, որովհետև թաղական ազատները պաշտպանում են նրան: Կրկնվում է պաշտօնապիրը, նորից չէ յաջողվում: Ուսումնական խորհուրդը տեսնելով իւր համբաւը այսչափ վար ընկած մի քահանայի ըմբոստութեան պատճառաւ հրաժարում է, որի յաջող գործունէութիւնը այնչափ փայլուն յոյսեր էր տալիս. հրաժարում է նաև ընդհ. տեսուչն, տեսնելով որ հրաժարվել է այն խորհուրդը, որի հետ պիտի բանակցեր իր առաջարկած վերանորոգումների համար: Այսպէս ահա մեր դպրոցական գործը գտնվում է սկանդալներին, այսպէս խաւարամիտ կուսակցութիւնը տանում է յաղթանակը:

Ս. Հայրիկը տեսնելով իրան այսպէս ինտրիգներով և դաւերով շրջապատված, մտադրված է հրաժարվել: Իրա ամեն ազնիւ ձեռնարկութիւնները, իրա բոլոր օգտակար կարգադրութիւնները զանազան անձանց նենգութիւններին զոհված տեսնել և համբերել, այդ կարող են անել այն առաջնորդները միայն՝ որք փառասիրութեան բուռն տենդից բռնված չեն ցանկանայ իրանց գահից հրաժարիլ եթէ ազգը մինչև անգամ կորչում է: Եթէ ս. Հայրիկը ի գործ կը դնէ իրա մտադրութիւնը, նա կը գնայ Մուշ, որտեղից երկու շաբաթ առաջ նրան ընտրել են առաջնորդ և վանահայր Գլակայ (Ս. Կարապետի) Վանուց:

Ահա այն ժամանակ լարուած կուսակցութիւնների հոսանքը բաց արվում է և ոչինչ առաւել ցանկալի է թիւրքերին, քան տեսնել զմեզ ոչնչաբանութիւններով զբաղուած, քան տեսնել մեզանում խռովութիւնները իրանց կատաղի աստիճանին հասած: Մեզ մնում է միայն յուսալ որ մեր ղեկավարները չեն թողնի մինչև մենք այդ աստիճան խոր կը ղլորվենք և կաշխատեմ յետ այսորիկ ճշդիւ հետեւել մեր կուսակցութիւնների մէջ մի քայլերին և ձեզ իմացում տալ:

Նախորդ ամսի 18-ին մի սոսկալի աղետ պատահեց Շիրակում: Յորեկվայ ժամի 6—7-ին թանձան գիւղի արևմուտքից մի ահագին ձեան հիւսիսկաւ և թաղելով իր ներքոյ մի ընդարձակ տարածութիւն աւերեց 48 ծառախիտ պարտէզներ, որոնց 5,000-ից աւելի հաստատման ծառեր ամփոփելով իրա միջում տարածվեց գիւղի վրա և բնակիչներով, կահկարասիներով և անասուններով հանդերձ կործանեց 16 տուներ: 58 անձինք կորան մեծաւ մասամբ կիներ և տղաներ: Ծանուցեալ աղետից վերջը բացուած տեսարանը առաւել սրտաշարժ էր: 30 կանգունից առաւել բարձրութիւն ունեցող ձիւնակոյտը փորելով մին իրա հօր, ուրիշ մը իրա զաւակների անշնչացեալ դիակը դուրս հանում էր ձիւնով ծածկուած աւերակների միջից, վասն զի նրանք որք նոյն ժամին տանից դուրս եկած էին, ազատվել էին աղետից:

1661 բնակարաններ։ Ներկայումս մի շարք տներ են կառուցանվում 1855 բնակարաններով։ Տներ կառուցվում են 5 կամ 6 յարկանի։ Անցեալ տարվայ դեկտեմբերին Պիրոգովի շինութիւնների մէջ բռնված էին 7829 բնակարաններ 14,604 անձինքներից։ Պէտք է աւելացնել, որ բնակարանները ունեն ընդհանուր աւազաններ, երես լուանալու տեղեր և ամեն տեսակ յարմարութիւններ։ Արհեստաւորները և բանւորները ամբողջ բնակարանի համար շաբաթական 2 ր. 50 կ. վճարում, իսկ մի սենեակի համար մօտ 1 ռուբլի։ Խրաքանչիւր բնակիչ ստանում է ձրիաբար ջուր, աւազան, դպրոց և այլն։ Բնակարան վարձողը պէտք է անբիծ վարք ունենայ։ Հաբեւեցողութեան և անկարգութեան համար նրան արտաքսում են։ Պիրոգովի տները ամուր են, մաքուր և մասամբ շքեղ։ Կարելի է ենթադրել, որ մի քանի տարիներից յետոյ Լոնդոնի բանւոր ազգաբնակութեան մեծամասնութիւնը առողջ և յարմար բնակարաններ կունենայ։ Բանւորների համար առողջապահական պայմանների համապատասխանող տների կառուցանելը եւրոպական բոլոր պետութիւնների մէջ հերթական հարց է դարձել։ Աւստրիայի մէջն էլ այդ հարցը եռանդով քննվում է։ Լրագիրները իրաւացի դանդատվում են, որ ոչ քաղաքային վարչութիւնները և ոչ էլ պարլամենտը—դրանով չեն զբաղված։ Լրագիրները վերջինների վրա այլ ևս յոյս չունեն և կարծում են, որ աւելի լաւ է դիմել մասնաւոր ձեռնարկութեանը և ապացուցանել գումարատէրերին, որ բանւորների համար տների կառուցանելը օգտաւէտ է ինչպէս բանւորների, նոյնպէս և ընկերութիւնների համար։ Առաջարկվում են երկու տեսակ տներ. ընդհանուր բնակարաններ օրավարձ բանւորների համար և ընտանեկան բնակարաններ այն բանւորների համար, որոնք մշտական պարապմունքներ ունեն, հեռապէս և աւելի շատ են աշխատում։ „Allg. Zeitg.“ լրագրի հաշուի համեմատ վերջին ձևի տները իրանց հողով կարժենան 1100 գուլդէն և նրանց կարելի է տարեկան 12 գուլդէնի վարձով տալ, այսինքն այնպիսի մի գնով, որ բանւորները վճարում են Վիէննայի շրջականերում զզուելի խցերի համար։ Եթէ տուլքերը հանվեն, իւրաքանչիւր կօտէջը 108 գուլդեն եկամուտ կը տայ, այնպէս որ $14^1/_2$ տարուց յետոյ ձեռնարկողը յետ կը ստանայ իր գումարը տարեկան 5%-ով։ Այդ ժամանակամիջոցի անցնելուց յետոյ կօտէջը կարելի է սեփականացնել բանւորին, եթէ նա բոլոր ժամանակը այնտեղ ապրել է, թէպէտ Վիէննայի մէջ դա շատ դժուար է։ Վիէննայի մէջ բանւորները ամսական 12 գուլդէն հեշտութեամբ կարող են վճարել, որովհետև լաւ բանւորը աշխատում է ամսական 50 գուլդեն։ Մինչդեռ օրավարձների համար, որոնք ամսական 30 գուլդեն են աշխատում, այդ գինը մատչելի չէ։ Այդպիսի բանւորների համար անհրաժեշտ են առողջապահական պայմաններին համապատասխանող ընդհանուր բնակարաններ։

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի բիւրօին ներկայացրած է օրինագիծ բանւորների համար խնայողական և թոշակաւոր ազգային կասսաներ հիմնելու վերաբերութեամբ։ Այդ նախագծի հեղինակները յիշեցնում են կառավարութեանը, որ 1880 թուականից կառավարութեանը ներկայացրած են 14 նախագծեր յօդուտ ծերացած բանւորների։ Այդ նախագծերը առանց հետևանքի են մնացել։ Ներկայումս պատգամաւորների ժողովի քննութեանը ենթարկված են 4 առաջարկութիւններ, որոնց նպատակն է աշխատանքի ժամանակ դժբաղդ դէպքերի զոհերին օգնել։ 1882 թուին երկու առաջարկութիւններ էին արված քարածուխի հանքերի մէջ աշխատողների կասսաները վերակազմելու համար։ Նոր առաջարկութիւնը եզրակացնում է և լրացնում է առաջվայ օրէնքները։ Սրա նպատակն է վերանորոգել գոյութիւն ունեցող կասսաները, հիմնել նրանց չեղած տեղերում և հաստատել խնայողական թոշակաւոր մի ընդհանուր կասսա, որ իր գործողութիւնը տարածէր ամբողջ Ֆրանսիայի մէջ։ Կասսաները հետևեալ նպատակն ունեն. 1) ապահովել բանւորներին դժբաղդ դէպքերում, օգնութիւն հասցնել վնասածին և նրա ընտանիքին։ 2) Ծերունի բանւորներին թոշակ ապահովել։ Պետութենից կամ մասնաւոր ընկերութիւններից կառավարվող խնայողական կասսաները անկախ հիմնարկութիւն են կազմում և իւրաքանչիւր տարի նշանակում են իրանց վնասի կամ օգտի գումարը։ Նախագիծը պետական բիւդժէից առանձին զոհաբերութիւն չէ պահանջում։ Նա յոյս ունի քարածուխի հանքերի մշակման տուած օգուտների վրա։ Թոշակ կարող է ստանալ հանքի մէջ 25 տարի և հանքից դուրս 50 տարի աշխատող բանւորը։ Բանւորի այրին կարող է ստանալ թոշակի կէսը, եթէ դոնեա 6 տարի ապրել է իր ամուսնի հետ։ Կասսաների վարչութիւնը կազմում է բանւորների և գործատէրերի մասնաժողովը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Քանաքաղաք մարտի 11-ին

Անցեալ նամակումս (տես «Մշակ» № 17) խոստացել էի «Պարսկաստանի Հայոց Եղբայրսիրական ընկերութեան» մասին գրել և ահա կատարում եմ խոստմունքս։ Ընկերութիւնը մինչ այժմ ունեցել է մի քանի ժողովներ և վճռել է մի քանի հարցեր. Ա. Ընկերութիւնը առանց կրօնի և դաւանութեան խտրութեան պէտք է օգնէ պարսկահայերին։ Բ. Ընկերութեան ժողոված գումարը և նրանից ստացած տոկոսները պէտք է 83 թուականից մինչ տասը տարի՝ պէտք է անգործադրելի մնայ, միայն աշխատվի շահեցնել գումարը դանդան միջոցներով, իսկ նշանակեալ ժամանակամիջոցը լրանալուց յետ՝ գումարի արդիւնքը գործ դնել կանոնադրութեան համեմատ։ Գ. Դեռ որովհետև կանոնադրութիւնը պատրաստված և հաստատված չէ, ցանկացողը «հիմնադիր անդամ» լինելու «Եղբ. ընկերութեան», պարտաւոր են միանուագ վճարել ոչ պակաս քան 100 ռուբ. իսկ տարեկան անդամ—5 ռուբլի։ Իսկ կանոնադրութիւնը հաստատվելուց յետ 100 ռուբ. կամ աւել վճարողները ընկերութեան հիմնադիր անդամ չեն կոչվիլ, այլ միմիայն անդամ ընկերութեան։

Ընկերութիւնը արդէն ընտրած ունի իր համար նախագահ, դանձապետ և ատենադպիր, ընկերգործերին կանոնաւոր ընթացք տալու։ Ընկերութիւնը մեծ շնորհակալութեամբ ընդունում է ամեն մի անձի, ամեն մի ազգասէրի նուէրը, և խնդրում հարկաւոր դէպքում՝ իրանց նուէրները ուղարկել ընկերութեան դանձապետին այս հասցէով։ Въ Баку, Степану Теръ-Оганову, для доставки на Гязскій берегъ Аветику Паньянцу. Ոչ պակաս քան 5 ռուբ. նուիրողները ստանում են ընկերութիւնից անդորրագիր։

Ցոյս ունենք, որ մեր հայ ազգի այն պարոնները, որ ամենայն բարի գործերում՝ ցոյց են տուել իրանց առատաձեռնութիւնը, չեն զլանայ և մասնակցելու «Պարսկ. Հայոց Եղբ. ընկերութեան» իրանց նիւթական օգնութեամբ։ Թող աչքի առաջ ունենանք, որ Պարսկաստանում հայերի դրութիւնը շատ աննախանձելի է և կարօտ օգնութեան։

Թ. Փանոսեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սէր Ուիլիամ Հարկօրտ պատասխանելով Կրօսսի հարցմունքին, յայտնեց, որ հրամաններ են տրված մայրաքաղաքի պօլիցիան 500 մարդկանցով մեծացնելու, իսկ մինչև այդ ժամանակ զօրքերը կօգնեն պօլիցիային պաշտպանելու հասարակական հիմնարկները։

—Ռուսաց դեսպան Մօրէնդէյմ, մարտի 19-ին գնաց Փարիզ, ինչպէս ասում են, երկու շաբաթով։

—Այս օրերս անգլիական մինիստրական խորհուրդը խորհրդակցում էր այն բանի մասին, թէ արդեօք յարմար ժամանակ է այժմ տարածելու իրլանդական բացառական օրէնքը մասամբ և Անգլիայի վրա։ Բայց դեռ ոչ մի վճիռ չէ ընդունված։ Ներկայումս բոլոր քաղաքական հարցերը նսեմանում են իրլանդական խնդրի առաջ։ Պօլիցիան անսովոր զգուշութիւն և գործունէութիւն է ցոյց տալիս. ոստիկանութիւնը կրկնապատիկ թիւով պահպանում է այն բոլոր տեղերը, որոնց վրա կասկած կայ որ կը յարձակվին։ Գվարդիայի զօրաբաժինը բռնեց պօլիցիայի տեղը պարլամենտում։ Պարնել Փարիզ գնաց և նախագասում է այնտեղ ապրել. իսկ նրա բարեկամ Շերիդան, որին նորերումս նա պաշտպանում էր պարլամենտում, որպէս չափաւոր և ամեն տեսակ բռնութեան թշնամի մարդուն, յայտնեց, որ ինքն կատարելապէս հաւանում է զինամիտային փորձը կառավարութեան շինութեան դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՕԴԷՍՍԱ, 21 մարտի։ Անցեալ շաբաթվայ ընթացքում 219,691 չետվերտ հացի բեռն է դրված 43 շոգենաւերի վրա։

ԲԵՐԼԻՆ, 21 մարտի։ „Germania“ լրագիրը հաղորդում է, որ թագաւորութեան առիթով պապի կողմից Ռուսաց Կայսրին շնորհաւորելու համար ուղևորվում է Մոսկվայ արքեպիսկոպոս Վանտուելլի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Օրերումս օրէնսդրական ճանապարհով կը քննվի զեմ ստվերների խնայողական կասսաների նախագիծը։ Լրագիրները հաղորդում են, որ օրերումս կը հաստատվեն կանոններ ակցիոներական առևտրական նոր բանկերի բացման մասին։ Երէկ վախճանվեցաւ կոմսուհի Վալուեվա։

ՕԴԷՍՍԱ, 21 մարտի։ Երէկ ուղևորվեցաւ Սախալին „Նիժնի-Նովգորոդ“ նաւը 500 տաժանակիրներով։

ՄԱՐԻՈՒՊՕԼ, 21 մարտի։ Ազովի ծովը մաքրվեցաւ սառուցից։

Կ. ՊՕԼԻՍ, 21 մարտի։ Սկսվեցաւ կոնֆերենցիա Լիվանի նոր նահանգապետ նշանակելու մասին։ Բ. Դրան առաջարկութիւնը Միրիդիտների իշխան Պրենկ-Դոդուին նշանակելու մասին ի նկատի է առնված Ռուսաստանից և Անգլիայից, և ստացել է միւս պետութիւնների հաւանութիւնը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շատախ մի ձոր է, որի երկու կողմից բարձրանում են լեռներ։ Ձորամիջից անցնում է մի բաւական մեծ գետ որ կը թափի Տիգրիսում։ Փուլեկած ձեան կոյտն այնչափ սոսկալի էր որ փուլ գալով լերան մի ծայրից այնչափ ընդարձակ տարածութիւն ծածկէլ, այնչափ աւերումներ գործելէ յետոյ, անցաւ ձորամիջից վազող գետից և բարձրացաւ մինչև հանդիպակաց լերան կէս տեղում։ Նորա պատճառած հոլից միայն շար մը ծառեր կործանվեցան և 32 տուն, 3 աղօրիք և 17 կրպակ խախտվեցաւ։ Գետը, որի միջից անցել էր ձեան հիւսն՝ կանգ առաց երկու ժամ ողողելով գետեղերեայ շինութիւնները։ Չը մոռանք ասել որ ամբողջ կորուստը կը վերաբերի հայերին, միայն մեռածների մէջը գտանվում են չորս քիւրդեր։

Այժմ էլ յիշեալ գրութեան մէջ մնում է Շատախ։ 16 գերդաստաններ կորած են, անտէրն ձիւն որ մինչև յունիսին հաղիւ թէ կը հալվի՝ ծածկել է նրանց տները, որոց առերակների վրայ ողբում են այժմ նրանց սակաւաթիւ մնացորդներ՝ որք շուտով իրանց կորած ընտանիքի մօտ կերթան եթէ նրանք չեն ստանայ շուտափոյթ օգնութիւն։ Կառավարութեան հրամանաւ այստեղ կազմվել է մի յանձնախումբ՝ որ նպաստ հաւաքում է վնասվածների համար։ Մինչև ցարդ խիստ փոքր նպաստ հաղիւ հաւաքվել է։ Կը յուսանք որ մեր ուսահայ եղբարք էլ կը մասնակցեն ընտանի սոսկալի աղէտի մը զոհ գնացող իրանց եղբայրների ցաւերին։ Այն տարածութիւն՝ որ ծածկվել է այժմ ձիւնով՝ ներկայացնում է բաւական հետաքրքիր մի տեսարան. շատեր ցանկանում են Շատախ գնալ այդ տեսարանին ականատես լինելու համար։ Այսպիսի սարսափելի պատահար մը այս կողմեր զրեթէ երբէք (կամ դոնէ շատ տարիներից ի վեր) տեսնված բան չէր։ Թաղեցիք այս սոսկալի արկածից սարսափահար մտադրվել են գաղթել։ Թաղ զրեթէ 200 տանից բաղկացեալ մի մեծ գիւղ է, բոլորն էլ հայ, եթէ նրանք ի զորձ կը դնեն իրանց մտադրութիւնը, անպատճառ կը ոչնչանան. բայց մենք գոնէ կը յուսանք որ մեր պաշտօնական մարմինները կունենան բաւական խելամտութիւն և չեն թողնի որ նրանք բուռն տպաւորութեան ներքոյ դիմեն դէպի առաւել խոր անկում։

Այս օրերը Կարճկանում պատահեց մի վայրագ սրբապղծութիւն։ Կարճկան քանի մը ամիս առաջ փոխ-գայմագամով կառավարվող մի գաւառ էր Վանի կուսակալութեան ներքոյ. քանի մը ամսից ի վեր ենթարկվել է Բաղեշի կուսակալութեան և իւր քաղաքական դիրքն էլ բարձրացել է մինչև գայմագամութեան աստիճան։ Սակայն այժմ սրբապղծութեան հեղինակը ուրիշ մարդ չէ, այլ նոյն իսկ գաւառի գայմագամն։ Նա իւր մի երիտասարդ հայ սպասաւորը գիւղից դուրս հանում է իբր թէ որսի գնալու համար. երբ գիւղից փոքր ինչ հեռու մի անմարդաբնակ եկեղեցի մօտենում են, գայմագամն ցուրտի պատրուակաւ ներս մտնում է սպասաւորի հետ և այնտեղ սրբութիւնների առաջ բռնաբարում է երիտասարդին, հրազէն ձեռք բռնած սպառնում է եթէ նա կընդդիմանայ և նորա վրայ յարձակում է իւր անասնական կիրքը։ Գայմագամի կինը որ իւր ամուսնի վատ մտադրութեան մասին արդէն կասկածում էր, տան պատուհանից տեսնելով որ իւր ամուսինը սպասաւորի հետ մտնում է եկեղեցին, խմացում՝ տալիս է գիւղացիներին, որք կը փութան դիմել բռնաբարութեան տեղին, կարծես տեղի ունեցած սրբապղծութեան վկայները լինելու համար միայն, մինչդեռ ճշմարիտ հայու արիւն կրող հայ մը պարտաւոր էր այնտեղ սրբութիւնների առաջ չան նման սատակեցնել իրանց սրբութիւնները պղծող չուն-գայմագամին։ Բայց, ինչ ասած, միթէ այդ արիւն տեղիս հայ ազատները, երբ մի Բէուֆ-բէկ նրանց ասնում, նրանց աչքի առաջ յանդգնեց սատիկ կերպիւ անպատուել իրանց կրօնական սրբութիւնները։ Մեր հայ ազատները ոչ միայն այդ չարին, այլ մի ո և իցէ Շաւարշ երբ նրանց վատութիւնները նշանակեց «Մշակի» էջերում, նրանք «Մշակի» այդ համարը Բէուֆ-բէկին ցոյց տուեցին և զրեցին մինչև անդամ թիֆլիս իրանց բարեկամներին, որպէս զի իմանան թէ ով է նամակագիրը և նրան մատնեն Բէուֆի վրէժխնդրութեան, բայց բարեբաղդ ենք որ մենք այն տեսակ խմբագրութեան հետ գործ չունենք, որոց առջև մի քանի գրոշ գցելով նրանց բոլոր գաղտնիքները կարող են իմանալ։ Եթէ մենք մինչև անդամ նրանց վրէժխնդրութեան կը զոհվինք, ուրախ ենք որ իրրև ճշմարտախօս հրապարակագիր միայն կը զոհվինք և ոչ իրրև զրպարտիչ։ Ինձանից յետոյ պ. Հրանտ և պ. բժիշկ Տիգրանեանց արդէն վկայեցին որ ես Բէուֆ-բէկի դէպքում ոչ միայն չէի զրպարտել, այլ մինչև անդամ գործը իրա իսկական արժէքից թեթև կերպիւ ներկայացրել էի ձեզ։ Յաւելին այն է որ մեզանում ճշմարտախօսն և զրպարտիչը շատ դժուար է իրարից ջոկել։

Գայմագամի անասնական կիրքերին զոհ գնացող երիտասարդը այժմ այստեղ է և բոլոր է յայտնել գայմագամի վարմունքի մասին։ Գործը Կ. Պոլիս պատրիարքարանին հաղորդուել է, նայենք ինչ անում են։ Այս ամօթալից դէպքը իրա մէջ պարունակում է խորհրդածութիւններ երկրի վայր ընկած բարոյական վիճակի վերաբերութեամբ, որի ուսումնասիրութիւնը ես թողնում եմ ընթերցողին։

Շաւարշ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

ՊԸԼԸ-ՊՈՒՂԻ

Գրեց Մ. Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ։ Գինն է 1 ռուբլի։ Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում։ 4—5 (1)

INJECTION AU MATICO

De GRIMAULT & Ce, Pharmaciens a PARIS

PERMIS EN RUSSIE

Փարիզի Գռիմօ և ընկերք դեղավաճառաց

ՄԱԹԻԿՕԻ ԷՆԺԷԿՑԻՕՆԸ

Ռուսաստանում ընդունված.



Այս դեղը որ Փէրուի Մաթիքօ կոչուած զուտ բոյսէն բաղադրեալ է, քիչ աւուր մէջ ամենից շատ հնացած հոսումները կը բժշկէ, և այդ պատճառաւ մի քանի տարուան մէջ ամբողջ աշխարհում հռչակուած է.

Ծախվում է Փարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառաց մօտ. Т

Թիֆլիսում դեղատան ապրանքների կովկ. ընկ. մէջ և Շահ-Պարոնեանցի մօտ։

(5. 12. 23) 6—9

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՍԻՄԷՕՆՕՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆԻ)։

Հիւանդները ընդունվում են ամեն օր։

Առաւօտեան՝ 9—10½ ժ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժութեան և վներական հ. և ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—կանանց, երեխայոց և ներքին հ. 10½—12 ժ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—ներքին հ. 12—1 ժ. աչքացաւի ԼԱՐԻՕՆՕՎ—ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի և ՐԵՑԽ—չորեքշաբթի և կիրակի։

Երեկոյեան՝ 5—7 ժ. ՈՒՇԱԿՕՎ—երեխայոց և կոկորդի հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Զղային և հոգեկան հ. և էլեկտրա-բուժութեան ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ—ամեն օր և, իբր խորհրդակից նոյն հիւանդութեանց համար, Ա. ԲԱԲԱՅԵԱՆ—երեքշաբթի և շաբաթ։ ԸՆԴՀԱՆՈՒԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (կօնսուլտացիա)—երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկոյեան։ Գիշերօթիկ հիւանդներ։ Վարձ՝ խորհուրդ երթևեկներին—50 կոպ. կօնսուլտացիան— 3 ռուբ. չքաւորները—անվարձ։

Հիւանդանոցի կառավարիչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ (ընակվում է նոյն հիւանդանոցում։)

Շուտով կը բացվի հիւանդանոցումը և Զբաբուժական բաժանումն, որին կը ձեռնարկի բժիշկ Տելեաֆուս։

(չոր. ուրբ.)

ԹԻՖԼԻՍԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ

պատճառով էժան ծախվում են 5 կոտոր դետին, Նաբերեժնայա փողոցի վրա նոր կամուրջի մօտ։ Տեղեկանալ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ։ ՆՈՅՆ պատճառներով ծախվում են կիսագնով. ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, բրդէ ԳՈՒԼԲԱՆԵՐ և այլն։ Նոյն տեղ կայ մեծ քանակութեամբ երկաթէ ԳՐԻԶՆԵՐ, երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ԹԷՑ 1-ն հունձի, չը թրջվող վերարկուներ, ԹԱՄԲԵՐ կանանց և աղամարդկերանց, ՍԱՊՕՆ և այլն 25% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Գլիցերինի սապօն ֆունտը 40 կ.։ Հնդկական բրինձ 8 կ. ֆունտը։

6—8

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“ ПРОДАЕТСЯ БРОШЮРА НА РУССКОМЪ ЯЗЫКѢ „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Цѣна 25 копѣекъ. Сот. Григорія де Грурунц.

Մի գերմանուհի տիկին որ այժմ թիֆլիսումն է ապրում, կը ցանկանար ուղեկցել մի ընտանիքի դէպի արտասահման։ Համաձայն է նոյնպէս մի հիւանդին ուղեկցել։ Տիկինը խօսում է ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ՖՐԱՆՍԻՐԷՆ և ՌՈՒՍԵՐԷՆ լեզուներով։

ДАМА нѣмка, пріѣхавшая изъ за границы и проживающая теперь въ Тифлисѣ, желала-бы сопровождать семейство или больнаго отъѣзжающихъ заграницу. Говоритъ по французски, по нѣмецки и по-русски.

Адресъ въ редакціи газ. „Мшакъ“ Հասցէ. „Մշակի“ խմբագրատանը։

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻԶՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալ ԼԻԱԿԱՆ Խ տեղը կան ամենի համար մեծ ԳՐԻԶՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱ, րիչներ, պենալ, ներ, ծխախոտ, ներ, ածելիք, ներ, ԲԱԶԿԱԹՈՌ, բարկու կախելու տեղեր, վզագօտի լութիւն ԱՆԳԱՆՈՒԹ։ Նոյն տեսակ ձեռագրեր ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ կան թուղթ, տետրակներ, քարեղ, ԳՐԱԿՈԹ, քսակամաններ, ՄԿՐԱՏ, բոցներ, խալիչա, ՄԱՀՃԱԿԱԼ, վեհամար իրեր, ԳՕ, ներ, ՄԱՏՈՒՑԱ, ՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊ, ՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրան, շվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակա, գլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաօշներ։ Բժշկական թուղթ վատերկլօգոտի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

8—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՑԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր.	10 կ. թէյի հետ ամեն տեղ	1 ր.	30 կ.
1 „	20 „	1 „	60 „
1 „	40 „	1 „	90 „
1 „	60 „	2 „	20 „
1 „	80 „	2 „	50 „
ամենալաւը	2 ր.	3 „	——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկօլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կօնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնեռի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի բէվօլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կօլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի պլբօմներ և այլն և այլն։

82—100

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ մի և նոյն տեղը ԽԻՆԱՑԻ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն։

1—100

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՒՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչէլի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոգաններ 2 ր. 75 կ. և 26 ր., սակիսյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուրթներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ թէյի գդալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոնները բէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. թէց Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօսաի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։ Վերևյիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։ Առևտրականներին գինը ջումն և առանձին պայմաններ։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

5—100

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հեռաւոր դիպվածներում։ ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարհանդիսում 1867 թ. ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիբոյեդովի և այլ դեղատներում։

Ծախվում է մէկ հատ ՄԵՔԵՆԱՅ զանազան տեսակ, հատիկներ մաքրելու համար պէս, ցորեան եղիպտացորեան, գարի, և այլն. ամենանոր և առաջին սիստեմայից է. նամակով ԿՈՎԿԱՍՈՒՄ ՉԷ ՏԵՍՆՎԱԾ։ Գնի և օրինակի համար կարելի էր դիմել պ. ԳՕԼԴԼԻՒՍՏ ընկ. դրասենեակը Արծրունու դպլերէում։ 4—4 (2)

ԳԱԼԵՐԷԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ № 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, վիենայի թոնէթ ֆարիկայի մէբէլի ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՑԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, թունջեանց ԱՄԱՆՆԵՐ էմալով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Марта 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.